ԲՅՈՒՐԱԿՆ

Այս տարվա առաջին հանդիպումը «Բյուրակն» հեռուստատեսային թանգարանում տեղի կունենա հունվարի 26-ին, 22.35-ին:

«Բյուրակնը» ոչ միայն ժողովրդական արվեստի պրոպագանդիստ է, որը պատմում է ինքնուս վարպետների, նրանց ստեղծագործությունների մասին, այլև հանդիսանում է յուրահատուկ դպրոց. «Ես որոշեցի արվեստում իմ ուժերը փորձել «Բյուրակնի» հաղորդումների ազդեցության տակ»— գրել են մասնակիցներից շատերը:

Հինգ տարի առաջ ինքնուս վարպետ Ելենա Գևորգյանը, դիտելով «Բյուրակնի» թողարկումները, որոշեց զբաղվել ասեղնագործությամբ: Նա սկսեց ամենապարզից՝ սովորական նախշերից, ընդօրինակումներից: Դասական զարդանախշերի հիման վրա Գևորգյանը հորինեց և իրականացրեց նաև սեփական կոմպոզիցիաներ: Այժմ ժանյակից բացի, ինքնուս վարպետը նախշազարդում է նաև կտորի վրա: Գեղագիտական դաստիարակության հանրապետական կենտրոնում Ե. Գևորգյանը երեխաներին սովորեցնում է ասեղնագործության արվեստը:

Հրշեջ կապի կենտրոնական կայանում է աշխատում Անիչկա Արշակյանը, որը պատասխանատու, իսկ երբեմն էլ անհանգիստ հերթապահությունից ազատ ժամերին ստեղծագործում է: Ինքնուս վարպետը կարում է, հյուսում, գոբելեն և գորգ գործում: Այժմ նա զբաղվում է բրուտագործությամբ՝ հողին, կյանքին առավել մոտ կանգնած այդ արհեստով, կավը նրա ջերմ ձեռքերի մեջ վեր է ածվում արվեստի:

Հանդեսի վերջում հետաքրքիր տեղեկություն կիմանաք Վալենտինա Աբրահամյանի «Հայկական ոսկերչություն» գրքի մասին:

Հեռուստադիտողները հնարավորություն կունենան հունվարի 28-ին, ժ. 19.30-ին դիտելու հանրապետության վաստակավոր նկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի ցուցահանդեսին նվիրված հաղորդումը:

Լայն է արվեստագետի ստեղծագործական մտահորիզոնը, ընդունակ է իր մեջ ներառելու գեղագիտական ա-

ՌՈՒԴՈԼՖ ԽԱՉԱՏՐՅԱՆ



մենատարբեր ըմբռնումների մարդկանց: Տարիների ընթացքում ստեղծված տասնյակ բնանկարները, նատյուրմորտները ու դիմանկարները պատկերում են այսօրվա մեր ծաղկող ու շենացող հայրենիքը, նրա անվանի մարդկանց: Մեծ հետաքրքրությամբ են դիտվում արվեստագետի «Առավոտ», «Աղջիկը խնձորներով», «Դերասան Վլադիմիր Մարյան», «Բալետմեյստեր Մաքսիմ Մարտիրոսյան» դիմանկարների շարքը, ինչպես նաև «Վարդեր», «Նատյուրմորտ ինքնաեռով», «Երեք ձուկ», «Ծաղիկներ» նատյուրմորտային աշխատանքները և այլն:

Ռ. Խաչատրյանի ստեղծագործության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում Երևանն ու հայկական լեռնաշխարհը: Այս շարքի աշխատանքները վերաստեղծում են Սովետական Հայաստանի մայրաքաղաքի և բնաշխարհի հուզական կերպարը: Նկարչի համար հավասարապես հետաքրքիր ու նշանակալից է անգամ անշան թվացող յուրաքանչյուր մանրուք: Մեծ թե փոքր երևույթներին նա վերաբերում է միևնույն սիրով և ուշադրությամբ:

Հաղորդման մեջ օգտագործված են նկարչի առավել նշանակալից աշխատանքները:

գործելու տարիներին, ինչպես է գնահատում իր ուսուցիչներին, իր դերերը...

գնահատում իր անցած ճանապարհը ինքը՝ դերասանը:

Հեռուստադիտողին հետա-

Չեկոնի արկածները» վեպից:

ՀՈՒՆՎԱՐԻ 27-ԻՆ, ԺԱՄԸ 22.35-ԻՆ:

ՆՈՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

ՌԱԴԻՈ

ՀՈՒՆՎԱՐԻ 25-ԻՆ, ԺԱՄԸ 18.15-ԻՆ

«Անցյալ տարվա ճարտարապետական լավագույն կառույցները» հաղորդումը պատմում է Ծիծեռնակաբերդի բարձունքում վեր խոյացած մարզահամերգային հոյակապ համալիրի, «Էրեբունի» օդանավակայանի նոր շենքի, Երևանի «Բարեկամություն» հրապարակի ստորգետնյա անցուղու մասին:

ՆԿԱՐՆԵՐՈՒՄ.— Տեսարաններ մարզահամերգային համալիրից, «Էրեբունի» օդանավակայանից և «Բարեկամություն» հրապարակի ստորգետնյա անցուղուց: